Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 28-09-2021 թ. որոշմամբ**
**««ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»»**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Պ. 36 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 26.210.02066 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2002-12-23 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 06902542 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)32243096 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | http://www.vsu.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | info@vsu.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| ՀՀ Կառավարություն | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| Վահրամ  Բաղդասարյան | | |
| Հրաչիկ Ղազարյան | | |
| Վանո Եղիազարյան | | |
| Սամվել Ապրեսյան | | |
| Մարգարիտա Շահվերդյան | | |
| Սամվել Աղաջանյան | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Ռուստամ Սահակյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 483 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ծրագրի անվանումը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | Պետության կողմից ուսման նպաստների փոխհատուցում /բարձրագույն և հետբուհական/ | 193845000 |
| | Պետության կողմից ուսման նպաստների փոխհատուցում /Հանրակրթական/ | 95997000 |

Digitally signed by
GHUKASYAN
GHUKAS
2501620380
Date: 2021.09.28
18:59:31 AMST

| | | |
|---|---|---|
| | Պետության կողմից ուսման նպաստների փոխհատուցում /միջին մասնագիտական | 39692400 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Դոկտորական կրթության բարեփոխում ARMDOCT | 6246912 |
| | Փոփոխություն լսարանում | 2744151 |
| | Հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարկետինգի խթանում(BOOST) | 5908331 |
| | Բաց Հասարակության հիմնադրամի դրամաշնորհ G20065 | 4542610 |
| | Բաց Հասարակության հիմնադրամի դրամաշնորհ G20064 | 4248601 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | 0 | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | Լաբորատոր գույք | 1204354 |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | 0 | 0 |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Պետության կողմից ուսման նպաստների փոխհատուցում /բարձրագույն և հետբուհական/ | 193845000 | |
| Պետության կողմից ուսման նպաստների փոխհատուցում /Հանրակրթական/ | 95997000 | |
| Պետության կողմից ուսման նպաստների փոխհատուցում /միջին մասնագիտական | 39692400 | |
| Դոկտորական կրթության բարեփոխում ARMDOCT | 1258872 | |
| Փոփոխություն լսարանում | 2744151 | |
| Հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարկետինգի խթանում(BOOST) | 5908331 | |
| Բաց Հասարակության հիմնադրամի դրամաշնորհ G20065 | 4661259 | |
| Բաց Հասարակության հիմնադրամի դրամաշնորհ G20064 | 4467111 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 348574124 | |

| | |
|---|---|
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 348574124 |

Նշումներ`

---

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը` 8 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

ԱՈՒԴԻՏ ՍԹԱՐ ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0035, Էմինեսկու 1-ին փողոց, 19ա
ՀԳԳՀ 1 21 0546, գրանցված Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

### Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ( ՖՀՄՍ-ներ):

### Վերապահումով կարծիքի հիմք

1) 31.12.2020թ. դրությամբ շահագործվող՝ 388 808 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները հաշվեկշռային արժեք չունեն, ինչը հանդիսանում է

ՀՀՄՍ 16-"Հիմնական միջոցներ" ստանդարտի 51-րդ կետի պահանջից շեղում: Նշված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ ղեկավարության մոտ առկա անորոշության հետևանքով աուդիտի ընթացքում հնարավոր չէր ճշգրտել շեղման հնարավոր ազդեցության չափը Հիմնադրամի շահույթի և սեփական կապիտալի վրա:

2) Հիմնադրամը միաժամանակ ստանալով հարկման նպատակով եկամուտ չհամարվող և հարկման նպատակով եկամուտ համարվող տարրեր (եկամուտներ), հարկման նպատակով եկամուտ չհամարվող տարրերի (եկամուտների), դրանց ստացման հետ ուղղակիորեն կապված նվազեցումների և հարկման նպատակով եկամուտ համարվող տարրերի (եկամուտների), դրանց ստացման հետ ուղղակիորեն կապված նվազեցումների առանձնացված հաշվառում չի վարել՝ համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի: Նշվածի հետևանքով մենք անկարող էինք ձեռք բերել բավարար քանակի համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի հարկվող շահույթի վերաբերյալ: Արդյունքում՝ մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլինեին կատարել շահութահարկի, զուտ շահույթի և սեփական կապիտալի արտացոլված կամ չարտացոլված գումարների ճշգրտումներ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագրքի) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՄԽ կանոնագրքի: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Այլ հանգամանք**

Հիմնադրամի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը ձևափոխված կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2020 թվականի հունիսի 26-ին:

**Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին

վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

**ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում,

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Տնօրեն՝ Արմեն Մելքոնյան

Աուդիտոր՝ Ղուկաս Մուշեղյան
*Որակավորման վկայական Ա 0068*

«17» նոյեմբերի 2021թ

# Ֆինանսական վիճակիմասին հաշվետվություն
# առ 31 դեկտեմբերի 2020թ.

| հազ. դրամ | Ծնթզ. | 31 դեկտեմբերի 2020թ | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 88662 | 184619 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 0 | 879 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | | 7786 | 0 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 6 | 9488 | 6658 |
| *Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ* | | *105936* | *192156* |
| Պաշարներ | 7 | 14290 | 16489 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 14351 | 23526 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 9 | 113982 | 34698 |
| *Ընդամենը ընթացիկ ակտիվներ* | | *142623* | *74713* |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | **248559** | **266869** |
| **ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| *Սեփական կապիտալ* | | | |
| Չբաշխված շահույթ (չծածկված վնաս) | | (15709) | (52541) |
| *Ընդամենը Սեփական կապիտալ* | | *(15709)* | *(52541)* |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 70736 | 161016 |
| *Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ* | | *70736* | *161016* |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 11 | 152435 | 124021 |
| Պարտքեր աշխատակիցներին արձակուրդայինի պահուստի գծով | 12 | 36109 | 34036 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | | 4988 | 337 |
| *Ընդամենը ընթացիկ պարտավորություններ* | | *193532* | *158394* |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **248559** | **266869** |

Տնօրեն (ռեկտոր) — Ռ. Սահակյան

գլխ. հաշվապահ — Ա. Մոսինյան

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 10.09.2021թ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 7-ից 35-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2020թ համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2020թ | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|
| Հասույթ կրթական ծրագրերից և այլ ծառայություններ | | 771378 | 765760 |
| Ծառայությունների մատուցման ինքնարժեք | | (677147) | (665459) |
| *Համախառն շահույթ (վնաս)* | | *94231* | *100301* |
| Իրացման ծախսեր | | | 0 |
| Վարչական ծախսեր | | (160312) | (100731) |
| Գործառնական այլ եկամուտ | | 2181 | 704 |
| Գործառնական այլ ծախսեր | | (19652) | (77) |
| Շարունակվող գործունեությունից այլ օգուտ/ (վնաս) | | 118333 | (3073) |
| *Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը* | | *34781* | *(2876)* |
| Շահութահարկի գծով ծախս (Փոխհատուցում) | | 2051 | (315) |
| *Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)* | | *36832* | *(3191)* |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | 0 | 0 |
| *Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք* | | *36832* | *(3191)* |

Տնօրեն (ռեկտոր)
Ռ, Սահակյան

գլխ. հաշվապահ
Ա.Մոսինյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 7-ից 35-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների մասին հաշվետվություն

## 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | Չբաշխված շահույթ (չծածկված վնաս) | Ընդամենը |
|---|---|---|
| *2018թ դեկտեմբերի 31-ի դրությամբ* | (33054) | (33054) |
| Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս) | (3191) | (3191) |
| Այլ համափարպակ ֆինանսական արդյունք | (16296) | (16296) |
| *2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ* (վերաներկայացված) | (52541) | (52541) |
| Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս) | 36832 | 36832 |
| Այլ համափարպակ ֆինանսական արդյունք | 0 | 0 |
| *2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ* | (15709) | (15709) |

Տնօրեն(ռեկտոր)
Ռ. Սահակյան

գլխ. հաշվապահ
Ա. Մոսինյան

Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 7-ից 35-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2020թ. Համար

| հազ. դրամ | Ծնթգ. | 31 դեկտեմբերի 2020թ | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | | **34698** | **33076** |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր*** | | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | | 829874 | 775251 |
| Այլ մուտքեր | | 26672 | 29647 |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | | (512622) | (488019) |
| Մատակարարներին վճարված դրամական միջոցներ | | (56818) | (89744) |
| Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ | | | |
| Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի | | (159867) | (171062) |
| Այլ վճարումներ | | (48083) | (48092) |
| Վճարված շահութահարկ | | (490) | (5798) |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | | ***78666*** | ***2183*** |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր*** | | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից | | 388 | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում անգծով | | (966) | (560) |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր | | | |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | | ***(587)*** | ***(560)*** |
| ***Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր*** | | | |
| ***Դրամական միջոցների և դրանց համարժեքներ իզուտ (նվազում)/աճ*** | | ***78088*** | ***1623*** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 1196 | (1) |
| **Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը** | | **113982** | **34698** |

Տնօրեն (ռեկտոր)
Ռ, Սահակյան

գլխ. հաշվապահ
Ա.Մովսիսյան

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 7-ից 35-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.09.2021 17:59